ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 5

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար համակարգչային, պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 30 նոյեմբերի 2017թ.

Սույն թվականի նոյեմբերի 30-ին ժամը 10.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար համակարգչային, պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հաձնաժողովի բոլոր անդամները՝ Ն. Ա. Կուտուզյանը, Խ. Ժ. Սաֆարյանը, Լ. Գ. Սիրունյանը, Ս. Պ. Կարապետյանը, բացառությամբ հանձնաժողովի նախագահ Ա. Հ. Ապրոյանի, ով գտվում է գործուղման մեջ՝ նրան փոխարինում էր Լ. Գ. Սիրունյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչված «ՍԵԳ» ՍՊԸ-ի և 7-րդ, 8-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից պայմանագրերի նախագծերի հաստատումն ու պայամանագրերի ապահովումը ներկայացնելու մասին: Հանձնաժողովը գնահատման թերթիկների հիման վրա գնահատեց, որ պայմանագրերի նախագծերի հաստատումը և պայամանագրերի ապահովումները կազմվել և ներկայացվել են սահմանված կարգով և ժամկետներում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «ՍԵԳ» ՍՊԸ-ի և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի միջև կնքել համակարգչային, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-

17/10(1)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 646.800 (վեց հարյուր քառասունվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

- 7-րդ և 8-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի միջև կնքել համակարգչային, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/10(2)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 78.696 (յոթանասունութ հազար վեց հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ:

հանձնաժողովի նախագահ/ անդամ՝	Լ. Գ. Սիրունյան
հանձնաժողովի անդամ՝	Ն. Ա. Կուտուզյան
հանձնաժողովի անդամ՝	Խ. Ժ. Սաֆարյան
հանձնաժողովի անդամ՝	Ս. Պ. Կարապետյան
հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Բ. Ղարաբաղցյան